



ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Դվին, Հակոբ Դվնեցի 17
Հեռ: / 60067/

С. Двин, Акоб Двнѐцу 17
Тел: / 60067

N

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 17
28.11.2014թ.**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

Ղեկավարվելով՝ "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ
մասի և "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների
պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված
ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների/
ներառյալ ոչ հիմնական/ շինարարության/տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը
սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

ա/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում
այգեգործական/ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող
հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել
- 7500 դրամ:

բ/Մույն կետի ա/ ենթակետով չնախատեսված օբյեկտների համար:

բ.ա 201 քմ-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական
տուրքը սահմանել - 15000 դրամ::

բ.բ 501 քմ-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 25000 դրամ:

բ.գ 1001 քմ-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել - 35000 դրամ:

բ.դ 3001քմ-ից ավել մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանել 50000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 1500 դրամ:

դ/20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար– 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների/բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքեր/ համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճանապարհաշինարարական նախագծով:

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության, տեղական տուրքը սահմանել – 1500 դրամ:

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի /ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել–2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

4.1 Ոգելիչ խմիչքների , վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար – 2500 դրամ:

4.2 Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար – 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա. Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քմ –ի վրա մեկ օրվա համար 350 դրամ:

բ. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150000 դրամ:

գ. խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 դրամ:

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 1000 դրամ:

7. Համայնքի տարածքում /բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 10000 դրամ:

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

Առևտրի համար - 25000 դրամ:

9. 1,2,3 կետերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար – 2000 դրամ

11. Աղբահանության համար բնակչության կողմից գանձված գումարի չափը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

Ավագանի՝

Գ. Բարեղամյան

Ա. Գրիգորյան

Վ. Դերմոյան

Ս.Զաղոյան

Ա. Ղազարյան

Հ. Նազարյան

Կ. Դավթյան

Համայնքի ղեկավար  Ա. Արշամյան